«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19/07/2024

«19» հուլիսի 2024թ.

Ամսաթիվ՝ «19» հուլիսի 2024թ.
Ժամ՝ 11:00
Հասցե՝ ՀՀ, 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Փաստաթղթի համար՝ 19/07/2024

«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) խորհրդի նիստին ներկա էին՝

1. Միխաիլ Հարությունյան՝ խորհրդի նախագահ:
2. Խաչատուր Անտոնյան՝ խորհրդի անդամ:
3. Վազգեն Նիկոլյան՝ խորհրդի անդամ:
4. Դավիթ Յավրույան՝ խորհրդի անդամ:
5. Նազիկ Ավագյան՝ խորհրդի քարտուղար:

Համաձայն Ընկերության կանոնադրության և ՀՀ կիրառելի օրենսդրության՝ Ընկերության խորհրդի նիստի քվորումն ապահովված է և խորհրդի նիստն իրավասու է:

Խորհրդի նախագահը բացեց նիստը և ներկայացրեց նիստի օրակարգը.

Օրակարգ՝

1. Ընկերության կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման մասին որոշման ընդունում:
2. Ծրագրային ազդագրի հաստատում:
3. Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանների հաստատում:

Խորհրդի նախագահը ներկայացրեց օրակարգի հարցերը՝ պարզաբանելով, որ Ընկերությունը ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով նախատեսում է թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, ինչի համար անհրաժեշտ է Ընկերության խորհրդի կողմից համապատասխան որոշման կայացում:
Ընկերությունը նախատեսում է քննարկման առարկա պարտատոմսերը տեղաբաշխել հրապարակային առաջարկի միջոցով, ինչով պայմանավորված առկա է նաև ծրագրային ազդագրի, պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանների հաստատման անհրաժեշտություն:

Խորհրդի նախագահն առաջարկեց քվեարկության դնել օրակարգի հարցերը:

Ղեկավարվելով Ընկերության կանոնադրությամբ և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ՝ Ընկերության խորհուրդը միաձայն.

ՈՐՈՇԵՑ

1. Թողարկել և տեղաբաշխել «Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ համաձայն ծրագրային ազդագրի և պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանների:
2. Հաստատել «Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծրագրային ազդագիրը:
3. Հաստատել «Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
4. Հանձնարարել Ընկերության տնօրենին իրականացնել սույն որոշման կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, այդ թվում, բայց ոչ միայն՝ ծրագրային ազդագիրը ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ծրագրային ազդագրի գրանցումից անմիջապես հետո հրապարակել այն Ընկերության պաշտոնական կայքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Խորհրդի նախագահ՝ Միխաիլ Հարությունյան

Խորհրդի անդամ՝ Խաչատուր Անտոնյան

Խորհրդի անդամ՝ Վազգեն Նիկոլյան

Խորհրդի անդամ՝ Դավիթ Յավրույան

Խորհրդի քարտուղար՝ Նազիկ Ավագյան

Հավելված 1
«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության խորհրդի
19/07/2024 թվականի թիվ 19/07/2024 որոշման

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ		
1.	Թողարկողը (ընկերության անվանումը)	«Ասկե Գրուպ» ԲԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավորող
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
6.	Պարտատոմսերի տեսակը	անվանական, արժեկտրոնային
7.	Պարտատոմսերի ձևը	ոչ փաստաթղթային
8.	Պարտատոմսերի փոխարկելիությունը	ոչ փոխարկելի
9.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար
10.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

		տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝ $$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ որտեղ՝ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, Y - մինչև մարում եկամտաբերություն:
11.	Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը	15.000.000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար և 15.000.000.000 (տասնհինգ միլիարդ) ՀՀ դրամ
12.	Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար կամ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ

13.	Պարտատոմսերի քանակը	համապատասխան թողարկման ծավալի և անվանական արժեքի, այսինքն՝ թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
14.	Առաջարկի իրականացման սկիզբը, ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Առաջարկի իրականացման ավարտը, ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
16.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիրը	արժեթղթերը դեռևս չունեն արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր
17.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության խորհրդի 19/07/2024 թվականի թիվ 19/07/2024 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
18.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
19.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվությունն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

20.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
21.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
22.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
23.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
24.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
25.	Մարման ժամկետը	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
26.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար կամ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ
27.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում են այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	«ոչ կիրառելի»
28.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
	Ժամկետները	

	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	Այլ տեղեկություններ	
29.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
	Ժամկետները	
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	Այլ տեղեկություններ	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
30.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Ասկե Գրուպ» ԲԲԸ ՀՀ, 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2
31.	Տեղաբաշխման այլ պայմաններ, որոնք ներառված չեն ազդագրում	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
32.	Տվյալ դասի արժեթղթերի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում են համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի
33.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով Ընկերությունը հետագայում	Ընկերությունը հաստատապես դիմելու է պարտատոմսերը կարգավորվող

	հայցելու է կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն, ապա նշվում են տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, դրույթ այն մասին, որ առևտրին թույլտվության դիմումը կարող է չբավարարվել, առևտրի թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	շուկայում ցուցակելու (առևտրի թույլտվություն ստանալու) համար, և ցուցակման (առևտրի թույլտվության ստացման) դեպքում պարտատոմսերի հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Արժեթղթերի ցուցակման (առևտրի թույլտվության ստացման) դիմում ներկայացվելու է Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկա, որի օպերատոր է հանդիսանում «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը: Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերության կողմից ցուցակման և առևտրի թույլտվության ստացման մերժման դեպքում Ընկերությունը պարտավորվում է իրականացնել թողարկված պարտատոմսերի հետգնում՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի կարգավորումների:
34.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն:
35.	Արժեթղթերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը վկայող փաստաթուղթ ստանալու ձևը	ենթակա է որոշման Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Խորհրդի նախագահ՝ Միխաիլ Հարությունյան

Խորհրդի անդամ՝ Խաչատուր Անտոնյան

Խորհրդի անդամ՝ Վազգեն Նիկոլյան

Խորհրդի անդամ՝ Դավիթ Յավրույան

Խորհրդի քարտուղար՝ Նազիկ Ավագյան